

## Այս համարում Հայերեն բաժին

1-	Որպեսզի համայնքի գործերը ավելի լավ ընթանան.....	1
2-	Լուրեր – Իրանահայ համայնք .....	2
3-	Լուրեր – Իրան.....	4
4-	Լուրեր – Հայաստան .....	4
5-	Հասարակական.....	8
6-	Մարզական.....	9

Այսունակների սղության պատճառով  
Հրացյա Աժամայանը Պարսկաստանում

և

Հայ հիմ գրականություն  
հոդվածների շարունակությունը կտպագրվի հաջորդ  
համարում

## Պարսկերեն բաժին

1-	Լուրեր - Իրան, Հայաստան .....	1
2-	Լուրեր - Սիածագգային .....	2

### Շապիկի առաջին էջում՝

Զարենցի օր՝ Ռաֆֆի համալիրում – Թեհրան

### Շապիկի վերջին էջում՝

Հայ լեռնագնացները Արարատի գագաթում

**Համար 138, Նոյ.-Դեկտեմբեր, 2007թ.**

**No. 138, Nov.-December 2007**

ماهnamه لویس – شماره ۱۳۸ – آذر ۲۰۰۷

## **Որպեսզի համայնքի գործերը ավելի լավ ընթանան՝ պետք է ձանաչել եւ տեղյակ լինել երեւույթներին**

Համայնքում տարբեր սրտցավ մարդիկ տարբեր արիթմերով խոսում են համայնքի գործերի ընթացքի մասին: Մեծամասնությունը այն կարծիքին է, որ առաջարկներ շատ են տրվել, որոնք անգամներ արձարձվել են, սակայն ընթացք չեն ստացել: Ինչպես պետք է ընթացք տրվեն այդ սրտցավ մարդկանց առաջարկներին կամ մտքերին: Մեր համայնքի գործադիր մարմինը՝ Թեմական խորհուրդն է, իսկ օրենսդիր մարմինը՝ Պատգամավորական ժողովը: Այս ազգային մարմիններից է կախված առաջարկներին ընթացք տալ կամ չտալը և նրանք պատասխանատու են մեր ժողովովի առջև:

Քանի օրինակներ բերենք եղած առաջարկներից, որոնք տարիներ է, որ արձարձվում են, բայց դժբախտաբար, այսօրվա Պիծ-ի դիվանը չի կարողանում սրանց մասին վերջնական դրոշում տա, կամ ընթացքի մեջ դնի, կամ էլ՝ այն կողմ: Օրինակ՝

1- Տասնյակ տարիներ խոսվում է, որ մեր համայնքի կանոնագրությունը կարիք ունի վերանայելու և ժամանակակից դարձնելու, անգամներ խոսվել է և առաջարկվել է կանոնագրության վերանայման հանձնախումբ կյանքի կոչել, սակայն վերը նշված մեր ընկերներին չի հաջողվել գործը ի մի բերել:

2- Արտագաղթի մասին սեմինար ունենալ: Այս առաջարկը թեև Սրբազն հոր կողմից էլ արձարձվել է, սակայն օրակարգ դարձնելու և ընթացք տալու որևէ միտում չկա:

3-Համայնքի մշակութային կյանքին վերահասու լինել: Առաջարկ կար որոշ դպրոցներ կամ կալվածներ, որոնք դատարկվել են աշակերտությունից, վերածել մշակութային տների: Մշակութային մարմնի աշխուժացնելու մասին անգամներ խոսվել է:

4-Համայնքի կալվածների արձանագրությունները և կալվածների անձնագրավորումը հրապարակել, որպեսզի բոլորը տեղյակ լինեն ինչ կալվածներ ունենք և որտեղ:

5- Կրթական և դպրոցների մակարդակը բարձրացնելու տարբեր առաջարկների ընթացք տալու ու ուսումնասիրություններ կատարելը:

6- Գոնե ապագա 3 կամ 5 տարվա ծրագրեր ունենալ: Մենք դեռ չենք իմանում, թե մի տարի հետո ինչ ենք ուզում և ինչ նպատակներ ունենք դրանց հետո:

7- Համայնքի տարբեր հարցերի շուրջ եղած ուսումնասիրությունների օգտագործումը, որոնք ժամանակին կատարվել է մի խմբի միջոցով՝ դկտ. Շարմիկ Դավթյանի գլխավորությամբ :

8- Համայնքում եղած տարբեր պյուտենցիալ ուժերից օգտվելու հարցը:


Այս առաջարկների շարանը կարելի է շարունակել, սակայն իհնա տեսնենք, թե ինչ պատճառներով մեր համայնքի կյանքի անփնտերը, ըստ պահանջի, դանդաղ են առաջ գնում, կարելի է նշել հետևյալ պատճառները՝

1- Պատգամավորական ժողովի դիվանի ոչ ինքնուրույն լինելը: Կուսակցականները՝ դկտ. Լևոն

Դավթյանը և պր. Ռուբեկի Կարապետյանը ավելի շուտ աշխատում են բավարարել կուսակցության և ոչ թե համայնքի կամ ՊԺՀ պահանջները:

2- Միրողական և ոչ այրոֆեսիոնալ բնույթը: Մեր գործադիր մարմինը կամ ՊԺՀ դիվանը կամավոր և անվճար են աշխատում, դա ունի իր դրական և բացասական կողմերը: Բացասական կողմերից կարելի է նշել անհետողականությունը և պատասխանատվության զգացումի պակասը:

3- Դաշնակցական կուսակցության ներքին խնդիրների և անձնական տարածայնությունների բացասական ազդեցությունը համայնքի ազգային մարմինների աշխատանքների վրա: Օրինակ որոշ դաշնակցական պատգամավորներ ինչ որ ծերուվ անհանգիստ են ՊԺՀ դիվանից կամ մտածում են իրենց արժանի տեղը չեն տվել ազգային մարմիններում կամ էլ իրենց անձնական վերլուծությունների հիման վրա մտածում են, որ անարդարություն է տեղի ունեցել կուսակցության կողմից իրենց անձի նկատմամբ: Սա պատճառ է դառնում, որ նրանք հաճախ բացակայեն ՊԺՀ նիստերին և իրենց եներգիան չեն ներդնում համայնքի հարցերի համար: Կրթական խորհրդի ընտրությունը նաև դարձավ կուսակցական քաջազնությունը մի ննուշ, որը պատճառ է դառնում մի խնդիր պասիվությանը: Նյութական հարցերով գրաղկելու տնօրինություններն են մրցակցությունը և առաջացնում կուսակցականների միջև և միջտ մի խումբ զոհ և մի ուրիշ խումբ դժգոհ է մնում: Բուժարանի խնամակալ մարմնի տնօրինությունը հանձնված է մի անձնավորության և անհայտ պատճառներով ոչ ոք չի հանարձակվում նրա սահմաններին մոտենալ:



## Լուրեր

### Իրանահայ Համայնք

#### Թեհրանահայ պատվիրակությունը Գանձասարի Ս. Շովիաննես Մկրտիչ Եկեղեցում

2007 թվականի հոկտեմբերի 15-ին Թեհրանահայ պատվիրակությունը, որը մասնակցում էր «ՀՀԿ (Համաշխարհային Հայկական Կոնգրես)-ի օրերը Արցախում և Հայաստանում», ծրագրին, այցելեց Արցախի Գանձասարի հայտնի պատմական Եկեղեցի, ստորև ծեղ ենք ներկայացնում Գանձասարի Տեղ Շովիաննես քահանա Շովիաննիսյանի տված տեղեկությունները այս Եկեղեցու մասին: Հարկ է նշել, որ քահանահայոց 1991 թվականներին եղել է Ֆիդայի և մասնակցել է ազատագրման բոլոր գործընթացներին:

Այսպես սկսեց քահանահայոց. «Եկեղեցին կոչվում է Գանձասարի վանքի Ս.Մկրտիչ Շովիաննես Եկեղեցի, կառուցվել է 1216 թ.-ին, 1230 թվականին օծումը է տեղի ունեցել: Գանձա սար է կոչվում, որովհետև այս սարի խորքից արտահանում էին պղնձի, արծարի և այլ

հանքանյութեր: 1211 թվականին արաբական Զավարի իշխանը գնում է Երևանի ուխտի և այնտեղ Աստծուց հրաման է ստանում, որ Շովիաննես Մկրտիչի գլուխը գտնվում է Երկու վանականների ձեռքում, հորդորում է վերցնի և տանի իր Երկիրը: Նա Շովիաննես Մկրտիչի գլուխը բերում է այստեղ կառուցում է այս չքնաղ Եկեղեցին: Շովիաննես Մկրտիչի գլուխը դրվում է Սուրբ սեղանի տակ և 1248 թվականին օծվում է Գանձասարի վանքի Ս. Շովիաննես Մկրտիչ Եկեղեցին:

Այստեղ ինգ դար՝ 500 տարի եղել է աթոռային կաթողիկոսարան, որը կոչվել է Գանձասարի կամ Աղվանի կաթողիկոսարան՝ մինչև 1815 թվականը: 1932 թվականին, երբ փակվում են բոլոր Եկեղեցները, այդ ժակատագրին է արժանանում նաև Գանձասարի վանքը: 1989 թվականին վերաբացվում է Արցախի թեմը և Արաջնորդ է նշանակվում Պարքե Արքեպիսկոպոս Մարտիրոսյանը և նոյն տարուց վերահսկում է վանքը մինչև այսօր: Վերականգնողական աշխատանքը նաև հենց նոյն տարում սկսեց և չի դադարել նոյնիսկ պատերազմի թեժ օրերին, Գանձասարի վանքի գմբերը համարվում է 13-րդ դարի հայկական ճարտարագիտության հանրագիտարան: 1992 թվականին թուրքերը ուզում էին խլել գանձասարի վանքը, հազարավոր ռումբեր ու հրթիռներ են նետել Գանձասարի վանքի վրա, բայց պապոյուն և 1992 թվականի հոկտեմբերի 29-ին կարծես թե օդանավը կանգնեց Գանձասարի գմբերի վրա և 40 հատ հրթիռ արձակեց Եկեղեցու վրա, երկու հրթիռ կպել էին տանիքին, բայց չին կարողացել ծակել ու անցնել ներս, զրկվեց մեկ գինվոր և շնչիք մի մասը լրիվ վառվել էր և երկու հոգի վիրավորվել էին: Կա նաև մի հրթիռ, որը չի պայթել:

Գանձասարում են գտնվում 30 կաթողիկոսների գերեզմանները, այսինքն Զավար իշխանից հետո բոլոր Զավարյանների տոհմը: Մինչև այսօր էլ ունենք այս գյուղում Զավարյանների կամ Զալայանների ազգանուններով մարդիկ, սա ընդունված և հայացված ազգանուն է:

Այսօր Արցախի թեմում 30 վերակարուցված կամ նորոգված Եկեղեցիներ կամ, բայց ընդամենը 15 հոգևորական կա, այդ պատճառով մյուս տարի ծրագիր ունենք այստեղ ճեմարան բացել և ուսանողներ ընդունել, որ մատակարարենք Արցախին հոգևորականներ»:

#### Եղիշե Զարենց 110 Մրցույթ-ձեռնարկ ՀՄՄ «Րաֆֆի» համալիրում

Հայազգի հանճարեղ բանաստեղծ Եղիշե Զարենցի ծննդյան 110 ամյակի առթիվ 2007 թվի նոյեմբերի 23-ին ՀՄՄ

«Րաֆֆի» համալիրում տեղի ունեցավ մրցույթ-ձեռնարկ, որը աշքի ընկավ իր նորառ և հետաքրքիր բնույթով, որն էլ անմիջապես գրավեց ներկաներին իր բազմաբուվանդակ



# Լույս Ամսագիր

հերթականությամբ՝ մինչև ծրագրի ավարտը: Չեռնարկին, որը տևեց 2,5 ժամ, ներկա էին 500-ից ավելի համայսականներ և բազմաթիվ հրավիրյալներ:



Ծրագրի հենց սկզբում կար անակնկալ՝ լսվեց համապետական բանաստեղծի դստեր՝ տիկ. Անահիտ Զարենցի խոսքը ուղղված սույն ձեռնարկին, որը նախապես ձայնագրվել էր Իրանի Խորհրդական Հանրապետության հայկական ռադիոֆամբի աշխատակիցների օգնությամբ: Ներկաները ուսնկայս ծափահարեցին տիկ. Ա. Զարենցի հեռավոր ներկայության համար:

Ծրագրում մրցում էին երկու խմբեր համալիրի սկաուտական բաժանմունքից: «Ծիածան» կոչվող խմբում էին Նարե Մովսիսյանը, Նազելի Ղազարյան, Արթին Բաղրումյանը, Արամիկ Զարեհին, Մեղմիկ Կարապետյան, Վենիամ Ղազարյանը, Ժայր Խաչավազանը, խմբի պատասխանատուն էր Յովսինե Սաֆարյանը: «Սահրի» խմբում էին Մեղմիկ Պողոսյանը, Աճի Ալեքսանյանը, Վիգեն Արքունյանը, Արամիկ Սիմոնյանը, Թեոդիկ Մելիքյանը, Վահե Շատրյանը, Անաշե Մարգարյանը, պատասխանատուն էր Յելգա Մեհրյանը:

Յուրաքանչյուր խումբ՝ Ելեկով Զարենցի



գրվածքներից, ողջույնի խոսք ներկայացրեց, այնուհետև «Ծիածան» խմբից Արթին Բաղրումյանը իսկ «Նայիրի» խմբից Մեղմիկ Պողոսյանը ասմունքեցին «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Մեծ հետաքրքրություն առաջացրեց խմբերի պատրաստած պարոդիաները՝ «Ես իմ անուշ համայնքի» վերնագրով, որում երևում էր նրանց համայնքասիրությունը և սերը ծննդավայրի նկատմամբ: Ներկայացվեցին հատվածներ

Զարենցի «Ամբոխները խելազարված» և «Դանքեական առասպել» պյուններից, ինչպես նաև ասմունքեցին «Լուսամիովի պես աղջիկ», «Ամեն տեսակ երգ երգեց», «Ելի գարուն կզա» և այլ բանաստեղծություններ: Իսկ «Կուզեմ իիմի փչե զունեն» ասմունքից հետո հնչեց նույնանուն երգը, որի ընթացքում պարում էին համալիրի «Անի» պարախմբի պարուինները՝ օր. Էլզա Մինասյանի գլխավորությանը:

Խնմբերը ներկայացրին եղիշե Զարենցի կենսագրությունը և պատասխանեցին մի քանի հարցերի: Այնուհետև խմբերից յուրաքանչյուրին տրվեց հանձնարարություն՝ երեք րոպեում հավաքել Մարտիրոս Սարյանի վրձնին պատկանող ե. Զարենցի գունավոր դիմանկարի կտորները (փազել): Յուրահատուկ վերջավորություն ուներ ծրագիրը: Նախ բեմուն տեղադրվեց ե. Զարենցի տուն-թանգարանի մի հատվածի նմանօրինակ կահավորություն (սեղան, արող, գրաներենա, ինքնաեր, և այլն), ապա ամեն խմբից մեկ հոգի ներկայացավ Զարենցի կերպարով, որի ընթացքում շվիով նվազագույն էր տիկ. Զարուիի Ենգոյանը: «Ծիածան» խմբից Զարենցի կերպարը ներկայացրեց Արութին Մահմուլյանը, իսկ «Նայիրի» խմբինը՝ Վրիթ Բաղրամյանը:



Վերջում համալիրի «Անի» պարախմբը պարեց «Ես իմ անուշ Հայաստանի» հոյակապ պարը, որն ավարտեց Սիս ու Սասիս պատկերով:

Մրցույթ-ձեռնարկի ժուրիի կազմում էին Նորվան Միքայելյանը, Քարմեն Ազարյանը և Ալիս Ստեփանյանը, որոնք իրենց անմիջական գնահատությամբ աշխատվեցին էին հաղորդում ներկաներին: Գնահատումների ընդհանուր արդյունքում հաղորդ ճանաչվեց «Ծիածան» խումբը և վերջում վարչության և մշակութային բաժանմունքի կողմից նվեր ու ծաղկեներ տրվեցին երկու խմբերի անդամներին և մյուս մասնակիցներին: Բեմի, բատերական մասի և մյուս աշխատանքներում օժանդակություն ցուցաբերելու համար գնահատվեցին Հայկ Խաչավյանը, Պետրոս Արգարյանը, Վարդան Բաբայանը, Վարդգեղ Ազարյանը և այլոր: Մրցույթ-ծրագրի վարողն ու ընդհանուր պատասխանատուն էր Սուսաննա Հանքարյանը, որն էլ ծրագիրն ավարտեց Զարենցի համարեղ խոսքերով «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը՝ քո հավաքական ուժի մեջ է»:

Թղթակից՝ Դուսիմե Սաֆարյան

## Նշվեց «Լույս» ամսագրի Ել «Ապագա» Երամսյա հանդեսի հիմնադրման 12-ամյակը

2007 թվականի նոյեմբերի 27 -ին ՀՍՍ «Րաֆֆի» համալիրի փոքր դահլիճում տեղի ունեցավ հանդիպում «Լույս» ամսագրի արտօնատեր և գլխավոր խմբագիր՝ դոկտ. Էդիկ Բաղդասարյանի և պատասխանատու տնօրեն դոկտ. Ռուբեն Սարդարյանի հետ:

Հանդիպմանը ներկա էին «Լույս» ամսագրի և «Ապագա» հանդեսի հին ու նոր բարեկամները: Սկզբում տեղեկություններ փոխանացվեց երկու մասում ուղղությունների, նպատակների և անցած ընթացքի մասին: «Ապագա» լույս է տեսնում ինտերնետային համակարգում, «Լույս»-ը նաև ունի իր ինտերնետային կայքը: Զեռք է բերված բավականին փորձ. «Ապագա» հանդեսը լույս է տեսնում 1995 թվականից իսկ «Լույս» ամսագիրը 2000 թվականից:

Վերջուն եղան մի շարք հարց ու պատասխաններ, ներկայացվեցին նաև մի շարք առաջարկներ ապագա աշխատանքների համար:

## Իրանահայ համայնքի պատմություն

2007 թ. դեկտեմբերի 4-ին ՀՍՍ «Րաֆֆի» համալիրի վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցավ դասախոսություն «Իրանի հայ համայնքի պատմություն» թեմայով: Դասախոսն էր մեր համայնքի հայտնի գիտահետազոտող դոկտ. Էդիկ Բաղդասարյանը:

Ծրագրին մասնակցում էին համայնքով հետաքրքրվող անձիք և որոշ միությունների պատասխանատուններ: Բանախոսը ներկայացրեց համայնքի համարող պատմությունը, թեմերի մասին տեղեկացվեց, նշվեց նաև նախքան Շահ Աբբասի ժամանակաշրջանի հայերի գաղթը, Պարսկաստանում գոյություն է ունեցել երկու թեմ, մեկը՝ պարսկահայքում ու մյուսը փայկատարանում, այսինքն մեկը՝ Թաղեի վաճռում, իսկ մյուսը Թավրիզում: Երբ մայրաքաղաքը Թավրիզից փոխադրվում է Սուլթանիե, թեմն էլ փոխադրվում է Սուլթանիե, հետագայում Սուլթանիեն վերացւում է եւ նորից վերադառնում են, 1833 թ. թեմը Թաղեի վաճքից փոխադրվում է Թավրիզ որովհետեւ նախ 1828 թ. տեղի է ունենում Ռուսական բանակի առաջխաղացումը դեպի հարավ: Յայերի համար ավելի հարամար պայմաններ են ստեղծվում ապենջու համար:

Անդրադարձ եղավ նաև այն սխալ տեղեկատվության մասին, որ վերջերս լույս է տեսել այն. Նորայր Շահնազարյանի հոդվածում և ընդհանրապես դաշնակցության կողմից, թե իրու 1946 թվականի ներգաղթը աղես էր հայ ժողովրդի համար: Յարգելի բանախոսը բացատրեց նաև, որ Յայաստանի այն ժամանակվա պայմաններում անհրաժեշտ էր բնակչության քանակը ավելացնել և Յայաստանի Յանրապետությունը անրապենելու խնդիր կար: Շոշափեցին նաև այլ հարցեր, որոնք հետաքրքրում էին ներկաներին:

Թղթակից: Արամիկ Զարեն

## ԽԱՐՈՒՅԿԱՇԱՂԵՍ

2007.թ դեկտեմբերի 15-ին ՀՍՍ «Րաֆֆի» համալիրի դահլիճում տեղի ունեցավ խարույկահանդես նվիրված սկաուտական շարժման հիմնադրման 100-ամյակին: Ծրագրին մասնակցում էին ՀԲԸՍ, ՀՍ «Սիփան» և «Նայիրի» միությունների սկաուտները իրենց պատասխանատուական կազմներով:

Ծրագրում սկսվեց խարույկի երգով ու պարով: Բացման խոսքով հանդես եկավ համալիրի սկաուտապետ ընկեր Սևան Սահակյանը:

Ծրագրում ընդգրկված էին երգ, պար, թատրոն, նրգություն և տիկնիկային թատրոն:

Վերջուն բոլոր սկաուտները ուս ուսի տված միասին երգեցին «Արագած»-ի երգը՝ շուրջպար բռնած, որը մեծ տպավորություն բռնեց ներկաների վրա: Պատրաստվել էր նաև 100 -ամյակին նվիրված մի մեծ տորթ, որը հանդիսավորությամբ բերվեց սրահ և որով հյուրասիրվեցին բոլորը: Այնուհետև սկաուտները ունեցան համատեղ ուրախ ժամանակ:

**Թղթակից՝ Լեռնիկ Վարդումյան**

## Իրան

### Չինաստանը Իրանի հետ պայմանագիր է կնքել Յադապարան հանքավայրի շահագործման շուրջ

ԹԵՂՐԱՍ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չինաստանը Իրանի հետ պայմանագիր է կնքել այդ երկիր հարավարեւմուտքում գտնվող Յադապարան հանքավայրի շահագործման շուրջ: Յադապարան հանքավայրի նավի հետախուզված պաշարները կազմում են 18,3 մլրդ բարեկ: Ինչ վերաբերում է բնական գազին, ապա դրա պաշարները գնահատվում են 12,5 տրլն խորանարդ ֆուտ:

Տեղի փորձագետները կիրակի օրը կնքված համաձայնագիրը դիտում են որպես թեհրանի խոչոր քաղաքական հաջողություն, քանի որ պայմանագիրը կնքվել է հակառակ ԱՄՆ-ի ճնշման, որը նա գործադրում է արտասահմանյան ընկերությունների վրա ԽՍՀՄական Յանրապետության հետ համագործակցության գարգացում թույլ չտալու նպատակով:

## Յայաստան

### ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը Գյումրիում հարգանքի տուրք մատուցեց 1988 թվականին ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակին

ԵՐԵՎԱՆ, 7  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ,  
ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ  
նախագահ Ռոբերտ  
Քոչարյանն այսօր  
Գյումրիում  
հարգանքի տուրք  
մատուցեց 1988 թ.  
ավերիչ երկրաշարժի



# Հոյս Ամսագիր

զոհերի հիշատակին: ՀՅ նախագահը ծաղկեասակ դրեց եւ գլուխ խոնարհեց երկրաշարժից ավերված Սր Ամենափրկիչ Եկեղեցու արջեւ տեղադրված հիշատակի հուշակոթողի մոտ: Յայ առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպիսկոպոս Աջապահյանի հանդիսաբետությամբ կատարվեց հոգեհանգստի արարողություն:

ՀՅ նախագահին ուղեկցում էին ՀՅ փոխվարչապետ Յովիկ Արքահամյանը, մարզպետ Լիդա Նանյանը, քաղաքապետ Վարդան Դուկայսյանը: Ո. Քոչարյանը զրուցեց հուշակոթողի մոտ հավաքված գյումրեցիների հետ, ծանոթացավ նրանց հուզող խնդիրներին: Մարզպետ Լ.Նանյանի տեղեկացմամբ՝ երկրաշարժից մեծապես տուժած մարզում առաջնահերթ են անօթեւանության, աշխատատեղերի խնդիրները:

Գյումրիում դեռևս 4 հազար անօթեւաններ կան: Այս տարի բնակարանի գննան մոտ 700 միլիոն դրամի վկայագիր է տրամադրվել, հաջորդ տարվա համար նախատեսվում է եւս 800 միլիոն դրամ: Մարզպետի հավաստիացնամբ՝ բնակարանաշինության խնդիրները կառավարության ուշադրության կենտրոնում են: Մարզում, սակայն, բնակարանաշինության ծրագրեր չկան, հաջորդ տարի հնարավոր է դրանց առանձին նախազծեր: Լ.Նանյանի դիտարկմամբ՝ եթե 2008-2009թ-ին բնակարանաշինական ծրագրեր իրականացվեն, հնարավոր է անօթեւանների խնդիրն արագ լուծել:

Նրա գնահատմամբ՝ զարգացման տենտերն անհամենատ են. երկրաշարժից հետո մինչեւ 1998թ-ը ոչինչ չէր արվել, դրամից հետո զարգացում ու բարձրացած բնակարանային ապահովության խնդիրների լուծումը: Մարզում տնտեսական ոլորտի, ճանապարհաշինական, գազիֆիկացման էական խնդիրներ չկան: Նշենք նաեւ, որ Գյումրու Սր Ամենափրկիչ Եկեղեցին, որը կառուցվել է 17-րդ դարում Աթի Օույնանուն Եկեղեցու կրկնությամբ եւ հիմնովին ավերվել 1988թ-ի երկրաշարժից, վերականգնվում է՝ պահպանելով ճարտարապետական ողջ տեսքը:

Նախատեսվում է Եկեղեցու շինարարությունն ավարտել 2009թ-ին: Գյումրիում վրարայնության պատճառով խոնարիվել է նաեւ նաեւ Սր Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին: Գործում են Սր Նշան, Սր Յակոբ եւ Յոր Վերը Եկեղեցիները: Գյումրու երեք ռուսական Եկեղեցիներից գործում է մեկը: ՀՅ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովը է ստեղծվել: ՀՅ վարչապետի գլխավորությամբ: Յանձնաժողովին հանձնարարվել է մինչեւ 2008 թվականի հունվարի 15-ը հաստատել միջոցառումների ծրագրը, իսկ կառավարությանը՝ ապահովել նշված ծրագրով նախատեսված միջոցառումների անցկացման ֆինանսավորումը եւ իրականացումը:

## Լրացավ Սպիտակի երկրաշարժի 19-րդ տարելիցը

Երեվան, 7 Դեկտեմբերի, ԱրՄԵՆՊՐԵՍ: Բուլղարիայի Եկեղեցական սինոդը դեկտեմբերի 4-ին նամակ է հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց կաթողիկոսին, որով իր խորին ցավակցությունն է հայտնել 1915 թ. տեղի ունեցած Յայոց ցեղասպանության կապակցությանը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՅ քաղաքաշինության նախարարության մանուկի եւ հասարակայնության հետ կապերի բաժնից, վերջին տասը տարվա ընթացքում հսկայական աշխատանք է կատարվել երկրաշարժի հետեւանքները վերացնելու

ուղղությամբ. Վերակառուցվել են բոլոր դպրոցները, կառուցվել բազմաթիվ բնակարաններ, ճանապարհներ, սակայն դեռևս չուրջ 6 հազար ընտանիք բնակվում է անապահով պայմաններում եւ տնակներում: Դեռևս չի հաջողվել ամրոցությամբ վերականգնել աղետի գոտու ենթակառուցվածքները: Ուստի ՀՅ պետական քաղաքականության շրջանակներում այս ուղղությամբ դեռ բավականին շատ անելիքներ են մնացել եւ բազմազան ծրագրեր են մշակվում ու կյանքի կոչվում: Նշենք, որ 2007թ-ին ՀՅ պետքութեցի 1 մլրդ դրամ է հատկացվել միայն աղետի գոտու շինարարության համար:

2001-2004թ.թ. ԱՄ ՄԶԳ-ի կողմից բնակարաններ ձեռք բերելու աջակցություն է ցուցաբերվել աղետի գոտու բնակող 5 հազար 914 ընտանիքների: 2005-2007թ.թ. ընթացքում քաղաքաշինության նախարարությունը պետական միջոցներով շարունակել է բնակարանների ձեռք բերմանն աջակցելու ծրագիրը: Մասնավորապես՝ 2005-ին բնակարանների գննան վկայագրեր (ԲԳՎ) է հանձնվել աղետի գոտու 283 ընտանիքների, այդ թվում՝ 221-ը՝ Գյումրիում, 62-ը՝ Ստեփանավանում: 2006թ. ԲԳՎ-ներ է հանձնվել 345 ընտանիքի՝ 242-ը՝ Գյումրիի անապահով ընտանիքներին, 103-ը՝ Լոռու մարզի, այդ թվում՝ 36-ը՝ Կանաձորում, 18-ը՝ Ստեփանավանում, 49-ը՝ Սպիտակում: ԲԳՎ-ների տրամադրման այս տարվա ծրագրի շրջանակներում վերջին 2-3 ամիսներին վկայականներ են հատկացվել 291 ընտանիքների, որոնցից 256-ը՝ Գյումրիում, 35-ը՝ Սպիտակում:

Այս տարի տրամադրված ԲԳՎ-ներով դեռևս բոլոր բնակարանները ձեռք չեն բերվել, քանի որ 2007-ի ծրագիրն ավարտվում է 2008թ-ի հունիսի 18-ին: Նշենք, որ Երկրաշարժից զոհվել է 25 հազար, Վիրավորվել 19 հազար մարդ: Այն ընդգրկել է հանրապետության ողջ տարածքի 40 տոկոսը, ամբողջովին կամ մասնակի ավերելով 21 քաղաք, 324 գյուղ, անօթեւան թողնելով 560 հազար մարդու: Ավերիչ երկրաշարժի էակիենտրոնը Սպիտակի Նալբանդ գյուղն էր: Սպիտակը միակ քաղաքն էր, որ ավերվեց 100 տոկոսով:

## Բուլղարիայի Եկեղեցական սինոդը Ճանաչել է Յայոց ցեղասպանությունը

Երեվան, 7 Դեկտեմբերի, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բուլղարիայի Եկեղեցական սինոդը դեկտեմբերի 4-ին նամակ է հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց կաթողիկոսին, որով իր խորին ցավակցությունն է հայտնել 1915 թ. տեղի ունեցած Յայոց ցեղասպանության կապակցությանը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՅ ԱԳՆ մանուկի եւ տեղեկատվության վարչությունից, առաջին անգամ Բուլղարիայի Եկեղեցական սինոդը Յայոց Եղենին վերաբերող փաստաթղթում օգտագործել է «ցեղասպանությունը» բառը:

«Բուլղարաց ժողովուրդն ու Եկեղեցին ոչ քիչ տաճառանք ու հալածանք են ապրել հինգդարյա օսմանյան լջի ներքո: Այս ամենը ցույց է տալիս Երկու քրիստոնյա ժողովուրդների ընդհանուր ճակատագիրը: Բուլղարիայում ապրում են շուրջ 70 հազ. հայեր, որոնք այստեղ Եղեյական ընդունելություն գտած տուժածների ժառանգներն են: Յավերժ լինի բազմաթիվ զոհերի հիշատակը, որոնք տուժեցին թուրքերի սրից», - ասվել է նամակում:

## ՀՀ նախագահի ընտրություններում առաջադրվել է ինը թեկնածու

ԵՐԵՎԱՆ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով այսօր, ժամը 18:00-ի դրությամբ, ներկայացվել է ՀՀ նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ին կայանալիք ընտրություններում թեկնածության առաջադրման ինը հայտ:

Համաձայն ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի՝ այսօր, ժամը 18:00-ին ավարտվել է թեկնածուների առաջադրման փաստաթղթերի ընդունումը: Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից առաջադրվել է ՀՀ վարչապետ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանը, «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցությունն առաջարկել է կուսակցության նախագահ Վազգեն Մանուկյանին, «Ազգային միաբանությունը» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանին, ՀՅ դաշնակցությունը՝ ՀՅԴ բյուրոյի անդամ Վահան Չովհաննիսյանին, «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանին, ժողովրդական կուսակցությունը՝ կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանին, իսկ «Ազգային համաձայնությունը՝ կուսակցության ղեկավար Արամ Ջարությունյանին:

ՀՅ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու ԼՂՀ նախագահի նախկին խորհրդական Արման Մելիքյանն ինքնառաջադրվել են:

Թեկնածուների գրանցումը կավավի դեկտեմբերի 31-ից մինչեւ հունվարի 20-ը: Նախընտրական քարոզչությունն իրականացվելու է հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 17-ը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՕԾԵՑ ԱԿՍԱՂԲՅՈՒՒԻ ՍԲ. ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ ՄԱՏՈՒՈՅ ԵՎ ՕՐԵՆԵՑ ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ



Կիրակի օրը Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղում օծեց նորակառուց Սուրբ Վարդան գորավար մատուցը: Մատուցի օժման արարողությամբ մասնակցելու համար Ակնաղբյուր էին ժամանել ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը եւ ՀՅ պաշտպանության նախարար Միքայել Ջարությունյանը:

Օրը արժանահիշատակ էր նաեւ այլ իրադարձությամբ: Նորած մատուցի մոտ էին հավաքվել նաեւ բազում զորակոչիկներ, որոնց իր օրինության խոսքն ուղղեց Ամենայն հայոց կաթողիկոսը. «Մեր հայրերը, երբ մեկնում էին հայրենիքի պաշտպանության առաքելությամբ, համախմբվում էին եկեղեցու կամարների ներքո, իրենց աղոթքն առ Աստված բարձրացնում, Աստծո օգնականությունը հայցում եւ Աստծուն ապավինած մեկնում ծառայության: Ահա այսօր մենք ուրախությունն ունենք ականատեսը լինելու նման մի արարողության, երբ զորակոչիկ հայրոդիները ծառայության մեկնելուց առաջ իրենց երդումը պիտի կատարեն եւ աղոթքն առ Աստված բարձրացնեն սրբազն այս մատուցի կամարների ներքո», ասաց Նորին սրբությունը՝ իր գնահատանքը բերելով ՀՅ պաշտպանության նախարարությանը եւ վատահություն հայտնելով, որ այս նախաձեռնությունը կհաստատվի որպես ընդհանրական կարգ, եւ ամեն զորակոչիկ, հայոց հնամենի գեղեցիկ սովորությի համաձայն, իր երդումը կկատարի սուրբ խորանների առջեւ՝ ներկայությամբ Երկնավոր Տիրոց:

Ծառայության մեկնոյ երիտասարդներին Վեհափառ հայրապետը հանձնեց Նոր կտակարաններ եւ խաչեր: Նորին սրբությունն իր գնահատանքը բերեց բարերար Միքայել Վարդանյանին, ում հանձնառությամբ ավարտին հասցեց մատուցի կառուցումը: Այնուհետեւ ամենքը ծաղկներ դրեցին ուխտատեղի դարձած Վարդանի ծառի հարեւանությամբ կանգնեցված խաչքարի առջեւ, ապա ազգային երգերի ներքո Ամենայն հայոց կաթողիկոսն ու ՀՅ վարչապետը խաչքարի եւ գորավար Յ. Բաղրամյանի տնկած կաղնիների հարեւանությամբ ծառատունկ կատարեցին:

## ՇԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԼԻՑՆ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ԵՎ ՄԻԵՎՍՈՒՅՑՆ ԱՆՌԱՊՈՒՅՑ ԿՅԱՆՔԸ

Տասնինը տարի առաջ այս օրը մոլորակի շատ երկրներում առաջին անգամ տեղեկացան, որ Հարավային Կովկասում գոյություն ունի Հայաստան երկիր՝ անօրինակ երկրաշարժի ցնցումներից մեկ օրուն հազարավոր զոհեր տված ու ավերված: Ավերվեցին հյուսիսային շատ բնակավայրեր, որոնք մոտ էին երկրաշարժի էպիկենտրոնին: Վարչական միավորներով գոտեւրված Հայաստանում ի հայտ եկավ եւս մեկ՝ աղետի գոտու հասկացությունը... ու մնաց:

Աղետի գոտու արագընթաց վերականգնման այնպիսի խոստուններ հնչեցին նույն այդ տարում ու դեռ երկար արձագանքվեցին, որ Սպիտակը, Կիրովականն ու Լենինականը վերականգնված ու նախկին աշխույժով լի տեսնելու հոլոյի մասին չեր խոսքը, այլ վստահության: Սակայն հետագայում իշխանավորներն ու պետության

Խնդիրներով «շահագրգիռ» բոլոր մակարդակների ներկայացուցիչները տառացիորեն «քբած ունեցան» ոչ միայն վստահության, այլև հույսի վրա:

Դեռևս առանց բնակարանի մնացած հազարավոր ընտանիքների համար 2003 թվականից հայրենի որակվող պետությունն այլևս բնակարաններ չի կառուցում: Ընդ որում, Հայաստանի կառավարությունը կոչվող օղակի աշխատանքներն աղետի գոտում բավականին թերեւացան, քանի որ, ի թիվս ՀՀ մնացյալ բնակավայրերի բնակչության, մեծապես ռուսաստանյան տափաստաններում հանգրվանեց շիրակցիների ու լոռեցիների զգայի մասը:

Բայց դա էլ հարց չլուծեց, բացի այն, որ մի «գեղեցիկ» օր վեր կացան համապատասխան մարդիկ ու որոշեցին, թե էլ չկա աղետի գոտի՝ իբր այդ կերպ անհետացան նաեւ աղետյալ գոտու բնակչության խնդիրները: Ուզած իշխանավորին մի երկու օր «դոմիկ» կոչվողի մեջ պահելուց դաժան պատիժ մեկ էլ կարող է աշխատավարձի հույսին մնալու անեցքը լինել, բայց



գրեթե քսան տարի այդօրինակ «բնակարանում» ապրողներին հասկանալու համար խսկապես աշխատող ու նորմալ մարդիկ են աղետք:

«Անձն ինչ որոշում են կադրերը» արտահայտության հեղինակի անձի անընդունելի լինելուց չեն արժեզրկվում այս խոսքերի նշանակությունն ու իմաստը: Մինչդեռ այսօր ով եւ ինչպես է փորձում նոյն Լենինականում ու Կիրովականում բնակչության խնդիրները լուրծել: Իշխանական նկրտումներն այնտեղ են հասել, որ «կերակրատաշտ» է ընկալվում ամեն ինչ՝ անգամ մարդկային ողբերգության ամենացնցող իրադարձություններից մեկից հետո վերականգնվող տարածաշրջանը:

Պարզունակ «գողականության» ու բազարային դատողությունների տիրույթում են գործում հենց նրանք, որ կոչված են վերականգնելու խնդուն ու առանձնահատուկ հումորով աշխարհ զարմացրած Գյումրու «դեմքը»: Մանրախնդիր ու հիմնականում

անտառահատելու գործորով են սեփական առօրյան վերջացնում նրանք, ովքեր առողջարան Վանաձորը պիտի վերականգնեին:

Սերօրյա Վանաձորն ու Գյումրին այցելելիս գրեթե ոչինչ հուսադրող եւ ուրախացնող չի ընկնում մարդու աչքին: Սիրտ ցավեցնելու չափ ակնհայտ է, որ խաղաղության ու ավարտուն լինելու յուրօրինակ վկայություն են միայն շիրիմները, որոնք անօրինակ մեծ գերեզմանոցների տեսքով «դիմավորում» են Գյումրիով կամ Վանաձորով անցնողներին: Այնուհետեւ վաղուց մեռած գործարաններն են երեւում, կիսակյանք փողոցներն ու ավելի հաճախ դատարկ տները:

Իսկ տնակներում դեռ ապրող ընտանիքների խնդիրներն առանձին խոսակցության թեմա են: Դրանք իսկապես անօթեւան ընտանիքներ են, քանի որ օթեւան չես կրչի մոտ քսան տարի «ժամանակավոր կացարան» հուսադրմանք տեղակայված տնակները, որոնք, զուրկ լինելով տարրական հարմարություններից, արդեն դժվար է ուղղակի կայուն ծածկ համարել: Եվ որքան քայլայվել են դրանք, առավել մեծ է հուսալքությունը դրանց բնակիչների:

Բայց ո՞ւմ է դա հետաքրքրում: Այդ նույն աղետի գոտին այդպես էլ չկառուցած նախկին իշխանություններն առանց ամորի էլի իշխանություն են երազում: Ներկայիս իշխանավորներն էլ մի կուսակցությունից երկու թեկնածու են առաջադրում կամ ընկերական-ախտերական վիճակներով էլի նոյն իշխանությունն են երազում՝ կիսատ-պատ թողած գործերից չանաչելով:

Ի վերջո, հենց աղետի գոտում էլ տեղական ինքնակառավարման կոչվող մարդիններն ավելի շուտ իրավունքներ են բանեցնում, քան պարտականություններ կատարում: Է, մինչեւ Ե՞րբ, մինչեւ որտե՞ղ եւ որքա՞ն պիտի համբերեն աղետի գոտու բնակիչները կամ մինչեւ ո՞ր տարելիցը պիտի ոչինչ չփոխվի:

## ԱՂԱՎԵԼ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԱՆ

### ՎՈՒՐՈՐ ՎԻԼՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ.

### ՄԵՐ ԵՐԱԶԱՆՔԸ, ԹԵՇ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԹՅ

### ԱՐՄԵՆ ՍԱՆԿԵԼՅԱՆ

#### Կանադայում

Հայաստանի նախկին դեսպան Արա Պապյանը շարունակում է իր ջանքերը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը որպես միջազգային գործող իրավական փաստաթուղթ ներկայացնելու գործում:



Նման մի դասախոսություն էլ երեկ կարդացվեց Հայոց ցեղասպանության թանգարանի գիտաժողովների դահլիճում: Դասախոսությունը առաջացրեց ներկաների մեջ հետաքրքրությունը, բազմաթիվ հարցեր ուղղվեցին գեկուցողին: Հետաքրքրությունը հասկանալի է, քանի որ այդ հրավարար վճռով 1920-ի նոյեմբերի 22-ին որոշվեց հայ-թուրքական սահմանը, թեև այն հետագայում չկատարվեց, քանի որ Սեւրի պայմանագիրը չեղալ հայտարարվեց եւ Կնքվեց Լոզանի պայմանագիրը, իսկ Հայաստանը խորհրդայնացվեց, սակայն, ըստ Արա Պապյանի, մնաց որպես գործող միջազգային փաստաթուղթ, որը գոնե ԱՄՆ-ի համար պարտադիր է: Հայաստանի, որպես միջազգային իրավական սուբյեկտի, գոյության դադարեցումը հիմնական պատճառներից մեկը եղավ, որ չիրականացվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի ծրագիրը: Սակայն նորանկախ Հայաստանի գոյությունը ամբողջովին փոխում է իրավիճակը, ըստ Արա Պապյանի, մենք այսօր պարտավոր ենք տեր կանգնել մեր իրավունքներին, իսկ Վիլսոնի իրավարար վճիռը, որը Կնքվել է ԱՄՆ-ի Կնքով եւ որի տակ կան նախագահի եւ պետքարտուղարի ստորագրությունները, մինչ օրս իրավական ուժ ունի եւ Հայաստանը ներկայումս պարտավոր է օգտագործել այդ փաստաթուղթը սեփական իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Իսկ որ մեր պետության միջազգային իրավունքները հարեւան երկրների, հատկապես Թուրքիայի կողմից ոտնահարվում են, արդեն ապացուցման կարիք չունեցող փաստ է: Հիշենք թեկուզ սահմանների փակ լինելու խնդիրը, որը նույնպես միջազգային իրավունքի կոպտագույն խախտում է, քանի որ գոյություն ունեն միջազգային բազմաթիվ օրենքներ եւ միջազգական պայմանագրեր, համաձայն որոնց դեպի ծով ելք չունեցող երկրները պետք է առանց դժվարության օգտվեն հարեւան երկրի տարածքից եւ նրա նավահամագիստներից, մի փաստ, որը մինչ օրս չի կատարվում, իսկ պաշտոնական երեւանն էլ չի փորձում դատական կարգով պաշտպանել իր իրավունքները: Ինչեւէ, հարցը, որը բարձրացրել է Կանադայում Հայաստանի նախկին դեսպանը, լուրջ հետաքրքրություն է առաջացրել փորձագիտական եւ քաղաքագիտական շրջանակներում: Թեեւ այս խնդրում դեռ կան չպարզված եւ բարդ հարցեր, մասնավորապես փաստաթորի վավերացված չլինելը եւ ամերիկյան կողմերի կողմից իրավարարության մերժումը: Այնուամենայնիվ միանշանակ է, որ խնդրի լայն քննարկումները կարող են միայն դրական դեր խաղալ թեմայի զարգացման համար: Այնպես որ այն հարցին, թե Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռն ի՞նչ է պատմական հնոտիություն, թե՝ միջազգային իրավունքի ուժ ունեցող փաստաթուղթ, կարող ենք պատասխանել, որ այստեղ շատ բան կախված է մեզանից: Կարեւոր է հայ քաղաքագիտական հանրության կողմից լուրջ բանավեճի կազմակերպումը: Համոզված եմ նաեւ, որ վաղ թե ուշ

հարցը կդառնա Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության օրակարգային հարցերից մեկը, որն այն կրածրացնի միջազգային կազմակերպությունների եւ հանրության առաջ:

## Հասարակական

**ՇԵՐՈՍ, ԴՈՒ ԱՆՑԱՐ ՅՈ ՓԱՌԵԻ ՈՒՂԻՆ  
(Մոնթե Սելքոնյանի ծննդյան 50 ամյակի առթիվ)**

Ավո...նրա  
նմանները ծնվում են 50  
կամ 100 տարին մեկ  
անգամ:  
Նա  
Հայաստանի  
ազգային  
ու  
անկախության  
գովերդող քարոզիչն էր:  
Թշնամու գնդակից չէր  
վախենում, անվախ էր,  
հայրենիքին նվիրյալ,  
հմուտ հրամանատար:



Գաղափարական մարդ  
էր: Ապրում ու  
պայքարում էր  
գաղափարներն ու  
երազանքներն իրականություն դարձնելու համար: Այս տարվա նոյեմբերի 25-ին մեջ հայրենասերը կը դառնար 50 տարեկան: Ցավոք, 1993-ի հունիսին նրա կյանքի թելը կտրվեց:

Մոնթե Սելքոնյանը ծնվել է 1957 թ. նոյեմբերի 25-ին ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Վիսեյլիա բնակավայրում: 12 տարեկան էր, երբ նրանց ընտանիքը տեղափոխվեց Եվրոպա: Նա երեք տարում ավարտում է Կալիֆորնիայի Բերկլիի համալսարանը: Կարծ ժամանակում սովորում է յոթ լեզու: 20 տարեկանում ստանում է հին ասիհական պատմության և հնագիտության մասնագետի վկայականը: Այնուհետև ավարտում է Օքսֆորդի համալսարանը՝ ստանալով դոկտորի կոչում: Մինչդեռ հայրենիքի զինվոր լինելու էր ի վերուստ նրա կոչումը, որը նրան այլ ճանապարհներով տարավ:

22 տարեկանում անդամագրում է Հայաստանի Ազգային գաղտնի բանակին (ԱՍԱԼԱ): Փորձությունների դժվար ճանապարհով անցած զինվորի համար Արցախյան պատերազմը ոգու կանչ էր: Պատերի վրեժն ու ցասումն արտահայտելու պահն էր հասել: 1991թ. Սեպտեմբերին Մոնթեն արդեն Շահումյանի շրջանում էր: 1992թ. հունվարին նշանակվում է Մարտունու շրջանի հնքանապաշտպանության ուժերի հրամանատար: Երկու տարի գիշեր ու ցերեկ Ավոն Մարտունու շրջանի լեռներում ու դաշտերում է անցկացնում քարո դարձնելով բարձ, իսկ հայրենի հողը՝ ներքնակ:

1993թ. հունիսի 11-ն էր, կեսօնիշերն անց: Տղաները հոգնած էին, մի քանիսը նիրիում էին հանգչող խարույկի մոտ: Ավոն, կոճղին թիկնած, հսկում էր հոգնած տղաների կարճատև քունը և, անքար նայելով մերթ աստղազարդ երկնքին, մերթ բոցկլտացող ու նարնորող կրակին, նտովի գնում էր հեռուներ...

Կանցնեն տարիներ: Մայիսի 28-ի վաղ առավոտյան տղաները, ինչպես որոշել էին, կիանդիպեն «Այս և Ապի» արձանի մոտ՝ Շուշի երթի զմայու: Կիավաքվեն մարտական ընկերները և խաղաղության պահպանյան կշարժվեն դեպի Շուշի: Յաղթանակած գինվորի հպարտությամբ կքայլի Ավոն, քանի ուսերին որդին կլինի, իսկ կողքին սիրելի կինը՝ Սեղան: Յայրին, մեր նոր տունը որտեղ պիտի կառուցեն՝ կիարցնի որդին: Ավոն մտովի էլ չհասցրեց պատասխան տալ որդուն: Յորիզոնը աստիճանաբար սկսեց շարագունը: Ցնորք երազը կարծ տևեց, սուրացող գնդակը սրաքեցրեց Ավոյին: Առյուծի նման մօնչաց: «Արթնացեք, տղերք, առաջ պետք է շարժվենք, դեռ ընելիք շատ ունիք»: Դա 1993թ. հունիսի 12-ի ջինց առավտոն էր: Մարտունու շրջանի Մարզիլու գյուղի ազատագրման համար մղված անհավասար մարտերուն Ավոն ընկավ՝ հավերժ կանգուն մնալով իր լեգենդար կերպարով: Անցավ 12 տարի: 2005թ. մայիսի 9-ին Սեղան ԱՄՆ-ից եկավ Յայաստան Մոնթեի երեք նվիրական երազանքներն իրականացրած:

« Սիրելի Սեղան, երբ ես չեմ լինի, մենակ չպիտի մնաս, պիտի ամուսնանաս, մեր երազած զավակն պիտի ունենաս, որու անունը թող Սարո ըլլա (Սարո – Մոնթե) և պիտի ապրես միայն մայր Յայաստանուն»: «Ես երջանիկ եմ, որ Մոնթե ունեմ, և հպարտ եմ, որ կատարել եմ նրա ցանկությունները», ասում է Սեղան: Իսկ իր ազգի բարի ապագայի համար Մոնթեն կարծես մեր բոլորի անունից, ասաց: « Անշուշտ, դեռ շատ ընելիք ունինք, մինչև որ մեր ժողովրդին իրավունքները կրնանք իսկապես ապահովիլ...»

Նարինե Նաջարյան

## Մարդական

**Հարցագրույց ՀՍՍ «Րաֆֆի»  
Համալիրի վարչության անդամ –  
Լեռնագնաց պր. Վիգեն Մանդանյանի  
հետ**

1- Խնդրում ենք ներկայացնեք Զեզ:

Վիգեն Մանդանյան եմ ծնվել եմ 1958 թվականին Թեհրանի Սասուն քաղաքամասուն (Զարքեշ):

2- Քանի՞ տարի ե, որ սկսել եք լեռնագնացությունը:

1976 թվականից սկսած նախ դպրոցական շրջանից հետո միությունների շրջանակում:

3- Առաջին անգամ ե՞րբ և ո՞ր լեռն եք բարձրացել:

Ալբորզի շրջանի Թուզալ գագարը՝ 3960 մետր:

4- Ինչպես եղավ, որ այսքան մարզաձևերի մեջ ընտրեցիք լեռնագնացությունը:

Սերս է եղել հանդեպ բնությանը, իհարկե, բացի լեռնագնացությունից գրադակել եմ նաև թերև ատլետիկայի մարզաձևուն:

5- Ո՞վ Զեզ ավելի շատ քաջալերեց, որ գրադարք այս մարզաձևով:

Դպրոցի շջանի ուսուցիչներց մեկը և լեռնագնացության մարզիչը:

6- Զեր ապագա ծրագրերից կարուրը որ՞ն է:  
Նվաճել փոքր մասիսի գագարը:

7- Արարատի նվաճումից հետո ի՞նչ զգացողություն ունեիք և ի՞նչ բարձրության վրա էք գտնվում:

Մեծ Սասիսի գագարը 5165 մետր է: Այդ պահին ապրածն զգացմունքների արտահայտելը անհնարին է, ես՝ միակ հայը լինելով այդ խմբում, իիշեցի նաև այն բոլոր լեռնագնացներին, որոնք երազում են կանգնել այդ բարձրությին:

8- Լեռնագնաց անհատը ֆիզիկապես ինչպիսի հատկություն պետք է ունենա: Նա պետք է ծանոթ լինի հավաքական աշխատանքներին: Ֆիզիկապես առողջ, բարձր տրամադրությամբ և սեր դեպի բնությունը:

9-Մեկ հուշ պատմեք Զեր լեռնագնացության ընթացքից: Արարատի նվաճումից հետո մենք ուղևորվեցինք դեպի Ախբամար կղզի, Ս.Խաչ Եկեղեցի և Վան քաղաք, որտեղ ապրածն պահերը միշտ կըմնա իմ հուշերում:



10- Որպես լեռնագնաց՝ ի՞նչ պատգամ ունեք մեր համայնքի երիտասարդներին:

Անտարբեր չկանուն միության աշխատանքների նկատմամբ, հետևեն այս մարզաձևերի և իրենց սերը վառ պահեն թե դպրոցական և թե ընտանեկան շրջանակներուն:

11-Զեր կարծիքը «Լույս» ամսագրի մասին:

Ծնորհակալություն հայտնելով « Լույս» ամսաթերթի աշխատանքներին, առաջարկում եմ, որ մեր համայնքը ավելի շատ թերթեր ընթերցի ու նաև թիկունք կանգնի « Լույս» ամսաթերթին:

**Թղթակից՝ Նարինե Նաջարյան**

## Թերամի քիր բռքսինգիստները մրցեցին «Րաֆֆի» համալիրում

Ուրար՝ նոյեմբերի 9-ին, իրանահայերի «Full Kick Boxing»-ի ակադեմիայի նախաձեռնությամբ և Արթուր ու Արթին Յովսեփյանների ղեկավարությամբ, Թերամ քաղաքի մասշտաբով «Րաֆֆի» համալիրում տեղի ունեցան «Քիր Բռքսինգի» մրցություններ, որը նվիրված էր իրանահայ նահատակներին, մրցությունները տևեցին 9 ժամ՝ առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը 6-ը:

Մրցություններին ներկա էին իրանի «Քիր Բռքսինգի» Ֆեդերացիայի պատասխանատուններն ու սույն Ֆեդերացիայի իրավարարները: Ողջույնի խոսքով «Րաֆֆի» համալիրի կողմից հանդես եկավ պրո։ Պետքու Արգայիանը և նեկ րոպե լրությամբ բռլոր ներկաները հարգեցին իրան-իրաքյան պարտադրյալ պատերազմում զոհված հայ նահատակների հիշատակը: Խաղերը տեղի էին ունենում տարրեր տարիքային խնճերում: Խաղերին մասնակցում էին նաև հայ քիր բռքսինգներ: Յայ մարզիկներից՝ Փարթիկ Սահմուլյանին հաջողվեց գրադարձնել երկրորդ տեղը: Վեջում տեղի ունեցավ մեջալարախչում և փակման խոսք ասվեց:

Ընդուհավորելով բոլոր հաղթողներին և հատկապես Արթուր և Արթին Յովսեփյաններին, ցանկանում ենք նրանց ուժը ու կրոռվ և առավել հաջողություններ: Յուսուն ենք իրենց այս հաջող քայլը օրինակ լինի համայնքի բոլոր երիտասարդների համար:

**Թղթակից՝ Նարիմն Նաջարյան**

## ԷԼԿՈԿՆ ԵԼ ԶԴԻՄԱՑԱԿ ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՄԱՍԻ ՇՈՒԺԿՈՒ ՇԱՐՎԱԾՆԵՐԻՆ



### Հայ բռնցքամարտիկը 6-րդ անգամ պաշտպանեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը

IBF-ի վարկածով միջին քաշով արոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը հերթական անգամ հաջողությամբ պաշտպանեց ուժեղագույնի տիտղոսը: Արթուրը 5-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթեց անգլիացի բռնցքամարտիկ Ուեյն Էլկոկին:

Կշռվելու պահին երկու բռնցքամարտիկներն եւ համարյա նույն քաշին էին: Արթուր Աբրահամի քաշը 72,5 կգ էր եւ նա 400 գրամով ծանր էր նրակցից: Իսկ ահա տարիքային առումով Աբրահամը 6 տարով երիտասարդ է Էլկոկից:

Առաջին իսկ րոպեներից Արթուրը տիրեց նախաձեռնությանը եւ սկսեց ճնշում գործադրել մրցակցի վրա: Արթեն 2-րդ ռաունդում նա մրցակցին նոկաուտի ենթարկեց: Յետագայում հայ բռնցքամարտիկը շարունակեց իր կամքը թելադրել մրցակցին՝ բարդ խնդիրներ առաջադրելով նրան: 5-րդ ռաունդում, երբ Արթուրի հումկու հարվածից հետո անգլիացի բռնցքամարտիկը եւս մեկ անգամ հայտնվեց նոկաուտում, ոհնգի մրցավարն ի նշան Աբրահամի բացահայտ առավելության, դադարեցրեց մենամարտը եւ նրան տեխնիկական նոկաուտով հաղթանակ շնորհեց: Այսահով, Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ ոհնգում շարունակեց իր անպարտելի խաղերի շարք՝ տոնելով 25-րդ անընդմեջ հաղթանակը (20-ը՝ նոկաուտով): Արթուրը 6-րդ անգամ անընդմեջ հաջողությամբ պաշտպանեց աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Ընթացիկ մրցաշրջանում սա Արթուր Աբրահամի 3-րդ մենամարտն էր, որոնցում նա հաջողությամբ պաշտպանեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Առաջին մենամարտը կայացել է մայիսի 26-ին Գերմանիայի Բամբերգ քաղաքում: Արթեն 3-րդ ռաունդում Արթուրը նոկաուտի ենթարկեց Սերաստիան Ղեմերսին: Յաջորդ մենամարտը նա անցկացրեց իր հայրենակցի՝ Խորեն Գետրի հետ, որը մարտահրավեր էր նետել չեմպիոնին եւ խոստացել էր անպայման Արթուրից խլել չեմպիոնական գոտին: Սակայն Խորենին էլ չհաջողվեց պարտության մատնել իր անվանի հայրենակցին: ճիշտ է, ի տարբերություն նախորդ մենամարտի, այս անգամ հաղթողին որոշելու համար հարկ եղավ 11 ռաունդ անցկացնել: Գրոհներից մեկի ժամանակ Արթուրի հումկու հարվածից Խորեն Գետրը գետնին տապալվեց:

Չեմպիոնական տիտղոսի առաջին պաշտպանությունն Արթուրն իրականացրել է 2006-ին: Մրցակիցը շանան թեյլորն էր: Մարտի 4-ին գերմանական Օլենբրուդ քաղաքում կայացած այդ մենամարտում Արթուրը հաղթեց միավորներով: Նույնական ավարտ ունեցավ նաեւ մայիսի 13-ին Գերմանիայի Ցվիկաու քաղաքում Կոֆի Յանտուայի հետ կայացած մենամարտը, որում Արթուրը 2-րդ անգամ հաջողությամբ պաշտպանեց չեմպիոնի տիտղոսը:

Մարզական իր կենսագրությունում Արթուրի վարած ամենադժվարին ու դրանատիկ մենամարտն, անշուշտ, եղիսոն Միրանդայի հետ սեպտեմբերի 23-ին Գերմանիայի Վետզլար քաղաքում կայացած մրցավեճն էր: Արթուրն իսկական մարզական սիրանք գործեց: Զարդած ծնոտով նա մինչեւ վերջ պայքարեց մրցակցի դեմ ու արժանի հաղթանակ տոնեց՝ մեկ անգամ եւս ապացուելով, որ քաշային իր կարգում ինքն ուժեղագույնն է:

Ինչ վերաբերում է Արթուրի առաջիկա ծրագրերին, ապա նա մտադիր է հաջորդ տարի մենամարտեր անցկացնել ԱՍՍ-ում եւ նույնիսկ պայքարել աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսի համար: